

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 6
14.01.2022թ.

1. ՀԱԱՀ-ում իրականացվող Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների 2021թ թվականին կատարված աշխատանքների հաշվետվությունների վերաբերյալ.

1.1. ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ հիմնադրամի գիտահետազոտական ինստիտուտների ու հետազոտական կենտրոնների տարեկան հաշվետվությունները և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու ու հետագա ֆինանսավորման.

- Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ
- Գյուղմեքենայացման և ավտոմատացման ԳՀԻ
- Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն.
- Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոն.
- Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն.
- Պեստիցիդների սինթեզի և փորձաքննության հետազոտական կենտրոն.
- Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության հետազոտական կենտրոն

1.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների, ԳՀԻ և հետազոտական կենտրոնների ղեկավարներին՝ սերտացնել համագործակցությունը այլ ստորաբաժանումների հետ, աշխատանքներ տանել համատեղ ծրագրերի իրականացման, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության բարձրացման, ստացված արդյունքների հանրայնացման և առևտրայնացման ուղղությամբ:

2. ՀԱԱՀ դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերում մագիստրոսական կրթության պրակտիկաների չափորոշիչներ ավելացնելու հարցի վերաբերյալ.


ՀԱԱՀ Գիտական խորհուրդը որոշեց.

2.1. ՀԱԱՀ դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերում ավելացնել մագիստրոսական կրթության պրակտիկաների չափորոշիչներ:

2.2. Հանձնարարել ՀԱԱՀ բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ սերտացնել համագործակցությունը ՀԱԱՀ ԳՀԻ-րի, հետազոտական կենտրոնների հետ, մեծացնել ուսանողների ներգրավվածությունը (այդ թվում՝ վճարովի հիմունքներով) գիտական հետազոտություններում:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ